

# Ժողովուրդ

59  
(2725)

25 ապրիլի երեքշաբթի 2023  
տպագրության ԺԲ տարի

Թ. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՉԻ ԽՈՐԸՈՒՄ ՉԵՌՆՈՑ ՆԵՏԵԼ ԵԿԵՂԵՑՈՒՆ



Այն, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությանը հաջողվել է ապականել և խեղել գրեթե բոլոր ոլորտները, ակնհայտ է. բազմիցս խոսվել է այս մասին: Թալանի վերադարձը թմբկահարելով՝ իշխանության եկածներին հաջողվել է խորը պառակտում մտցնել հանրության մեջ, բաժանել սեւերի ու սպիտակների, հատկապես հաջողվել է արցախցի-հայաստանցի բաժանարար ու կործանարար գծեր անել:

Փաշինյանի իշխանությունը չի խորշում առաջին օրից ձեռնոց նետել Յայ առաքելական սուրբ եկեղեցուն: Սրա մասին են վկայում իշխող ֆրակցիայի պատգամավորների և անձամբ Փաշինյանի կողմից խորհրդարանի ամբիոնից պարբերաբար հնչող հայտարարությունները եկեղեցու վերաբերյալ: Ի դեպ, եկեղեցու դեմ արշավի առաջին ծիլերը երեւացել են հենց 2018թ-ին, երբ պարբերաբար Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսի հրաժարականի պահանջով հրահանգավորված ակցիաներ էին իրականացվում Երեւանի փողոցներում:

Հիմա արդեն բանը հասել է այնտեղ, որ Փաշինյանն իրեն համեմատում է Աստծո հետ՝ Աժ ամբիոնից հայտարարելով. «Եթե եկեղեցու հարաբերությունները կառավարության հետ լավ չեն, ուրեմն դրանք լավ չեն Աստծո հետ»:

«Ժողովուրդ» օրաթերթը Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանից հետաքրքրվեց՝ Յայաստանի պատմության մեջ եկեղեցու և պետության միջև ինչ առճակատումներ են եղել, և դրանք ինչ էլք են ունեցել:

«Անկախության հռչակումից ի վեր եկեղեցի-իշխանություններ հարաբերություններն այսպես լարված չեն եղել: Դարերի խորքում՝ Սովետական Յայաստանում, ամեն ինչ էլ եղել է՝ բռնազանձման դեպքեր, անզամ կաթողիկոսին խեղդամահ են արել (պետանվտանգության ծայտյալ գործակալները 1938 թվականի ապրիլի 6-ին խորեն Ա Կաթողիկոսին խեղդամահ են արել Վեհարանի իր բնակարանում), բայց դա լրիվ ուրիշ իրականություն էր. այն ժամանակ անկախ պետություն չէր, Մոսկվայի թելադրանքով էր լինում ամեն բան:

Բայց անկախության հռչակումից հետո այսպիսի հարաբերություններ պետության և եկեղեցու միջև չի եղել: Եղել են դեպքեր, երբ եկեղեցին ու իշխանությունը տարբեր տեսակետներ են ունեցել մի հարցի շուրջ, բայց դրանք շուտ հարթվել են, չեն լարվել», -ասում է Աջապահյանը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ եթե Փաշինյանը սովետական շրջանում ղեկավարներ, կարող էր և ավելի հեռուն գնալ եկեղեցին թիրախավորելու հարցում, իսկ հիմա, կարելի է ասել, հնարավորություն չունի, դրա համար էլ սահմանափակվում է միայն եկեղեցին թիրախավորող հայտարարություններ անելով:


Աժ անվտանգության աշխատակիցները ապրիլի 20-ին՝ խորհրդարանում տեղի ունեցած խայտառակ միջադեպի ժամանակ՝ իրենց ապօրինի գործողությունների ընթացքում, պատռել են «Յայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի կոստյումը: Հիշեցնենք, որ այդ օրը Աժ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը քաղաքական ակցիա էր իրականացրել Աժ ամբիոնի մոտ, ինչից հետո պատգամավորի ակցիային միացել էին նաեւ ընդդիմադիր մյուս պատգամավորները: Ընդդիմադիրների քաղաքական ակցիայի ժամանակ ժողովրդավարության բաստիոն Յայաստանում, Աժ նախագահ Ալեն Սիմոնյանի անմիջական ցուցումով, անվտան ության աշխատակիցները բռնի ուժով, քաջքշելով հեռացրել էին ընդդիմադիրներին Նիստերի դահլիճից: Պարզվում է՝ Ալեն Սիմոնյանի հրահանգից ոգետրված՝ Աժ անվտանգության աշխատակիցներն այնքան «ինքնամոռաց» են գործել, որ պատռել են Գեղամ Մանուկյանի կոստյումը: Յայաստանի խորհրդարանի պատմության մեջ, իհարկե, աղվապահարույց միջադեպերի, ծեծկռուքների պակաս չի եղել, բայց այս խորհրդարանը, կարծես, մտադրվել է ձեկորդ սահմանել ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ կիսառած բռնություններով:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արարատյան Յայրապետական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանը դիմում է ներկայացրել Գլխավոր դատախազության ապօրինի գույքի բռնազանձման գործերով վարչություն: Իսկ ինչ դիմումի մասին է խոսքը: Այս տարվա հունվարի 23-ին Արարատյան Յայրապետական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանը հրավիրվել էր Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման գործերով վարչություն: Կճոյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր, ավելին՝ Նավասարդ Կճոյանի գույքն արգելանքի տակ է դրվել: Բանն այն է, որ իրավապահները հարց են բարձրացրել՝ որտեղից հոգեւորականը, որ չի ունեցել եկամուտ, ունի մեծ ծավալների գույք: Հոգեւորականը բացատրել է, որ դա նա ստացել է որպես հոգեւորական նվիրատվություն, իսկ, ահա, իրավապահները հոգեւորականին բացատրել են, որ եկեղեցին ասում է, որ այդ նվիրատվությունն իրենը չէ, եկեղեցունն է: Հիմա բանը հասել է այնտեղ, որ դատախազությունը սպասում է հոգեւորականի կողմից ներկայացվող փաստաթղթերին, որոնք կհիմնավորեն, որ Կճոյանի ունեցվածքն օրինական է, և նվիրատվությունն անձամբ իրեն են արել, այլ ոչ թե եկեղեցուն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Արարատյան Յայրապետական թեմի առաջնորդը դատախազություն է ուղարկել փաստաթղթեր, որտեղ ցույց է տվել, որ իր ունեցվածքն օրինական ծագում ունի, նվիրված է եղել հենց իրեն:



Այսօր Ազգային ժողովում կգումարվի արտահերթ նստաշրջան: Նստաշրջանի օրակարգում այն հարցերն են, որոնք նախորդ նիստի ժամանակ չէին հասցրել քննարկել, քանի որ երեք օր շարունակ պատգամավորները քննարկում էին կառավարության ծրագրի կատարողականը: Եւ, ահա, այսօր սկսվող նստաշրջանում նաեւ դատավորների ընտրություններ կլինեն: Բարձրագույն դատական խորհուրդը Կճոյանից դատարանի դատավորների 3 թափուր տեղերի համար առաջադրել է 3-ական թեկնածու: Կճոյանից դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի թափուր տեղի համար առաջադրվել են Արմեն Դանիելյանը, Ելիզավետա Դանիելյանը, Արսեն Նիկողոսյանը: Կճոյանից դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի թափուր տեղի համար առաջադրվել են Կարեն Աղաջանյանը, Լիզա Գրիգորյանը և Կարեն Թումանյանը, իսկ Կճոյանից դատարանի քաղաքացիական պալատի թափուր տեղի համար առաջադրվել են Վահագն Թորոսյանը, Լիլիթ Խաչատրյանը և Անի Մխիթարյանը: Իսկ ովքեր են նրանք. Անի Մխիթարյանը ԲԴՄ անդամ է, ում գործունեության ժամկետը լրանում է հաջորդ ամիս: Նա իշխանությունների «սրտի թեկնածուն» է: Դատավոր Լիզա Գրիգորյանը ԶԳ պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանի ընկերուհին է. չի բացառվում, որ նա էա ընտրվի: Արմեն Դանիելյանը իշխանության «սրտի կալանք տվող» դատավորներից է, նրանց սրտի մյուս թեկնածուն: Եվ չնայած խորհրդարանում ընտրություն կլինի, սակայն ԶԳ-ում նախապես են որոշում, թե որ պաշտոնում ում կընտրեն:



ՍՈՒՏ Է

# ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի ներազդեցիկ կյանքում ճեղի ունեցող իրադարձությունների շուրջ գրուցել է «Միասին» հասարակական-հաղափարական շարժման խորհրդի անդամ Նարինե Գիլբարյանի հետ:

-Տիկին Գիլբարյան, Նիկոլ Փաշինյանը պարբերաբար տարբեր ամբիոններից հայտարարում է, թե Հայաստանը Մադրիդյան սկզբունքներով է Արցախը ճանաչել Ադրբեջանի կազմում: Ի՞նչ հետևանքներ կունենան նման հայտարարությունները, արդյոք դրանք չեն վատնում բանակցային հետագա գործընթացին:

-Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները զուգահեռ իրականությանից են, կարելի է ասել՝ բանակցությունների հակառակ կողմն են: Ինքը հեղափոխությունից հետո հայտնի դարձավ թերթում տպված հոդվածաշարը գիրք դարձնելով՝ «Երկրի հակառակ կողմը»: Փաշինյանը դեռևս «Երկրի հակառակ կողմից», որը, ըստ ամենայնի, ադրբեջանական է, չի կարողանում դուրս գալ:

Նրա այդ պնդումը, թե Մադրիդյան սկզբունքներով Հայաստանը Արցախը ճանաչել է Ադրբեջանի կազմում, բոլորովին չեն համապատասխանում իրականությանը, որովհետև Մադրիդյան սկզբունքները, իր վիճելի կամ ոչ վիճելի կետերով, փաստում էին, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը երկարատե բանակցությունների մեջ է, եւ առաջարկում է ճանապարհներ, որտեղ հարգվելու են երեք հիմնարար սկզբունքներ. դա տարածքային ամբողջականությունն է, ազգերի ինքնորոշման սկզբունքը եւ ուժի սպառնալիքի չլիարժեքման սկզբունքը: Այստեղից արհեստականորեն հանելով միայն մի սկզբունքը եւ Մադրիդյան սկզբունքներին վերագրելով դրա գերակայությունը՝ Նշանակում է հերքական հնարախաղը կատարել՝ կոծկելով իր իսկ ստորագրած համաձայնությունները կամ չկատարած ու կատարած քայլերը: Պետք է արձանագրել, որ Փաշինյանի այդ հայտարարությունը սուտ է, չի համապատասխանում իրականությանը եւ ոչ միայն վնասում է բանակցային գործընթացը, այլ այն բերում է փակուղի: Մինսկի խումբը, որը միակ ձեռնարկն է՝ թեեւ սառեցված, բայց առանձին անդամներով գործող, չի հայտարարում, թե Արցախի հարցը փակված է, եւ Հայաստանը ճանաչել է Արցախն Ադրբեջանի կազմում, այլ նոր տարբերակներ է առաջացնում: Միայն Ալիևը եւ Հայաստանի վարչապետի պաշտոնում գտնվող Փաշինյանն է խոսում, թե հարցը սպառված է, կամ Արցախը միջոց էլ ճանաչվել է որպես Ադրբեջանի մաս:



Այս ամենը փաստում են, որ ՀՀ վարչապետը չի արտահայտում հայության պետական եւ ազգային շահերը, ուստի կարծում եմ, որ այս իրավիճակից միակ ելքը մեր սահմանադրական իրավունքն է՝ փոխելու այս իշխանությանը

**-Տիկին Գիլբարյան, բայց Ձեր նշած սահմանադրական ճանապարհով հնարավոր է իշխանության փոփոխության հասնել, թե՛ միայն հանրային ցամաք միջոցով է հնարավոր այդ ամենը:**

-Սահմանադրական կարգը պետք է պաշտպանել, դիմադրությունը եւ ընդգրկումը եւս սահմանադրական ճանապարհներ են, այստեղ որեւէ հակասահմանադրական երեւույթ չկա: Մենք պետք է մեր բողոքն ամբողջականացնենք, այն կարող է ունենալ ինստիտուցիոնալ քաղաքական լուծում: Պայքարը կարող է լինել քաղաքական, դիմադրությունը թույլատրելի է, եւ այդ դիմադրության միջոցով պետք է ստիպել խորհրդարանին նոր վարչապետ ընտրել, որը կարտահայտի մեր պետական եւ ազգային շահերը:

**Ձրուցեք ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆԸ**



## ԳՈՐԾԸ ՀԱՄԱԿ ԻՐԱՎԱՊԱՆՆԵՐԻՆ

Ապրիլի 4-ին ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովում, որտեղ ընտրում էին ՄԻՊ թեկնածուին, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը սպառնալիքներ էր հնչեցրել ընդդիմության թեկնածու Էդգար Ղազարյանի հասցեին: Գործը հասավ իրավապահներին: ՄԻՊ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը գրություն ուղարկեց ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝ հայտնելով, որ Արթուր Հովհաննիսյանը ցուցաբերել է ոչ միայն անհարգալից վերաբերմունք, խուլիգանական պահվածք, այլեւ սպառնալիքներ է հնչեցրել: ՀՀ քննչական կոմիտեն պարզեց, որ Հովհաննիսյանի նկատմամբ քրոջործի հարուցումը մերժելի է, քանի որ հիմքերը բացակայում են: Նույն իրավապահ համակարգը, որը Հովհաննիսյանի սպառնալիքների ու գործողությունների մեջ հանցակազմ չի տեսնում, շարքային քաղաքացիների նմանօրինակ հայտարարությունների առիթով քրոջործ է հարուցում եւ նրանց հասցնում դատարանի դռները: Խոսելով փաստերով քաղաքացի Նարեկ Սամսոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, քաղաքական հայացքներով պայմանավորված, հանդես է եկել բռնություն գործադրելու իրապարակային կոչով, իրապարակայնորեն արդարացրել է բռնությունը: Այսպես, 01.04.2023թ. AntFake.am կայքում իրապարակվել է ««զարկեց ճակտին, փռեց գետնին», ում պոռթկյուն է եղար Ղազարյանը. «իմենսիվի» փողքաթի #05» վերտառությամբ տեսագրությունը, որում առկա են բռնության կոչ ու բռնության արդարացում, որով Նարեկ Սամսոնյանը պատգամավորներին հորդորում է հետեւել պատգամավոր Սիեր Սահակյանի օրինակին՝ մասնավորապես նշելով, որ «կատարած շանը կանխելու համար կան ոչ ֆիզիկապես սպանելու օրինակներ»:

Մեկ այլ դեպք. քաղաքացի Արտակ Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «www.facebook.com» սոցիալական ցանցի իր էջում իրապարակային եղանակով վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ, պայմանավորված քաղաքական հայացքներով, 2022 թվականի ապրիլի 03-ին ժամը 22.09-ին, բռնություն գործադրելու իրապարակային կոչ է արել: «Նիկոլի վզակոթին տալով՝ պետք ա շարտենք էտ պոռոչից, հետո սատկացնենք: Միացե՛ք Սիմոնյանին»: Այս առիթով քրոջործը դատարան է հասել: Քաղաքացիներից Սապետ Սաքանյանին էլ մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի ապրիլի 18-ին Վանաձորից «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, այնուհետեւ «Ռոբերտ Քոչարյանի աջակիցներ հավաքվե՛ք» կայքէջի խմբում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վերաբերյալ կիսված մեկնաբանության տակ Փաշինյանի հասցեին բռնություն գործադրելու իրապարակային կոչ պարունակող գրառում է արել: Այդ արարքի համար քաղաքացին ազատազրկման է դատապարտվել, ապա տուգանվել է 100.000 դրամի չափով: Կանայք էլ չեն խուսափել պատասխանատվությունից. Արմինե Գառնիկի Աղաջանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 19:30-ին, իր անձնական օգտագործման բջջային հեռախոսում ներբեռնված «Ֆեյսբուք» հավելվածով տարածել է ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի մասնակցությամբ Naira Zohrabyan ֆեյսբուքյան օգտատիրոջ «Ու ռՆց են սրանք ապրում» վերնագրով տեսանյութը՝ դրան կցելով «Քիչ է...սատկացնել քա-ական թուրք ծնունդների հատ-հատ ու խմբակային» գրառումը: Այս գրառումից հետո կնջը պատժել են իրավապահները բռնություն գործադրելու իրապարակային կոչերի համար: Ահա Նիկոլ Փաշինյանի արդարադատությունը. երբ ՔՊ խմբակցության քարտուղարն է սպառնում լեզու եւ ականջ կտրել, անատիժ պետք է մա, իսկ երբ շարքային քաղաքացին է նման հայտարարություն անում Փաշինյանի հասցեին, պատժվում է:

## ՅԵՂԱՍՊՈՒՆՈՒԹՅՈՒՆ

# ՁՈ ԲԱՅԳԻՆԻ ՈՒՂԵՐԶԸ

Երեկ հրադարակվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ջո Բայդենի՝ 1915 թվականի իրադարձություններին նվիրված ուղերձը:

Այս անգամ եւս Բայդենը 108 տարի առաջ տեղի ունեցած դեպքերը ցեղասպանություն է որակել՝ նշելով, որ 1915 թվականի ողբերգական իրադարձությունների հետեւանքով մեկուկես միլիոն հայեր տեղահանվեցին կամ սպանվեցին:

«Աշխարհի տարբեր երկրների հետ միասին հիշատակի տուրք մատուցելով այս ցավալի պատմությանը՝ մենք նաեւ ընդգծում ենք այն տոկոսությունն ու վճռակալությունը, որ ցուցաբերել է հայ ժողովուրդը: Վերապարծներից շատերը ստիպված էին նոր կյանք սկսել այլ երկրներում, այդ թվում՝ Միացյալ Նահանգներում: Թե՛ այստեղ, թե՛ ողջ աշխարհում հայ ժողովուրդը հույսն է հակադրել աստեղծությանը», - հայտարարել է Բայդենը՝ նշելով, որ Հայոց ցեղասպանությունը վերապարծներն ու նրանց սերունդները մշտապես անդրադարձել են այս իրադար-



ծություններին, որպեսզի թույլ չտան դրանց կրկնությունը: «Եկեք մեկ անգամ եւս խոստանանք, որ կպայքարենք աստեղծության դեմ՝ հանուն մարդու իրավունքների եւ վայրագությունների կանխման», - նշել է Բայդենը:

ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատները, ինչպես նաեւ նախագահ Ջո Բայդենը պաշտոնապես ճանաչել են մեկուկես միլիոն հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՑԱՆ

ԱՄՆ-Ն ՈՒ ՖՐԱՆՍԻԱՆ ՄՏԱՀՈԳ ԵՆ

ՊԱՐԱՆՁՈՒՄ ԵՆ ՀՆՉԵՑՆԵԼ ՍԹԱՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ



«Ադրբեջանը կատարել է մի գործողություն, որի անթույլատրելիության եւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ նախատեսված չլինելու մասին հայտարարվել է բազմիցս ու շատերի կողմից, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարի կողմից 2023թ. փետրվարի 28-ին Բաքվում»,- ասվում է Արցախի Հանրապետության պետնախարարի հայտարարությունում:

«Այսօր Ադրբեջանը փակել է Արցախը Հայաստանին կապող Ստեփանակերտ-Գորիս մայրուղու՝ Հայաստանի Հանրապետության սահմանին միացող ճանապարհահատվածը (Լաչինի միջանցքում) եւ սկսել անցակետի կառուցման ու կահավորման աշխատանքներ:

Ադրբեջանը կատարել է մի գործողություն, որի անթույլատրելիության եւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ նախատեսված չլինելու մասին հայտարարվել է բազմիցս ու շատերի կողմից, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարի կողմից 2023թ. փետրվարի 28-ին Բաքվում:

Ադրբեջանը խախտել է եռակողմ հիմնարար փաստաթղթի դրույթներ, որին հետեւելու խստագույն անհրաժեշտության մասին բազմիցս հայտարարել են հրադադարի հիմնական երաշխավոր ՌԴ-ն, հավաքական Արեւմուտքը, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ երկրները. փաստաթուղթ, որը հիմք են ընդունել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Արցախի Հանրապետության ժողովուրդն իրավունք ունի ակնկալելու, պահանջելու հիշյալ դերակատարներից՝ հնչեցնելու հստակ գնահատականներ, ձեռնարկելու գործնական քայլեր, եւ սպասում է դրանց: Ադրբեջանի էթնիկ գտնված քաղաքականությանը մենք հակադրում ենք սեփական հողում ազատ ապրելու մեր հստակ վճռակալությունը՝ չբացառելով այդ նպատակին հասնելու ոչ մի միջոց:

Ողջամտորեն ակնկալում ենք, որ հայրենիքից բռնությամբ զրկվելուն կամ բռնի հպատակեցվելուն հակադիր մեր վճռակալությունն ու սեփական իրավունքների համար մեր արդար պայքարն ի վերջո կստանան միջազգային պատշաճ աջակցություն»:

ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրները առանձին-առանձին մտահոգություն են հայցնել Հայաստանն Արցախին կաողող ճանադարհին անցակետեղադրելու Ադրբեջանի որոշման կադակցությամբ՝ ընդգծելով, որ դա խաթարում է խաղաղության գործընթացը:

Ուղերձը երեկ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հղեց նաեւ Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը:

«Այս պահին մենք ցանկանում ենք, որ կողմերի միջեւ լինեն բանակցություններ: Ցանկացած բռնության կիրառում, ցանկացած սադրիչ գործողություն խաթարում է խաղաղության գործընթացը, եւ Վաշինգտոնը փորձում է առաջ շարժվել եւ ջանքեր գործադրել խաղաղության գործընթացն առաջ տանելու ուղղությամբ», - ասաց նա:

Հարցին՝ արդյոք այն, ինչ հիմա տեղի է ունենում արցախցիների նկատմամբ, չի կարող բնորոշվել որպես ցեղասպանության փորձ, դեսպանն ասաց՝ որեւէ որակավորում տալու իրավասություն չունի, բայց կարող է ասել, որ Վաշինգտոնն այս պահին պատժամիջոց չի կիրառում Բաքվի նկատմամբ. ինչ կլինի հետո՝ չի կարող մեկնաբանել:

Մինչեւ այդ Պետդեպարտամենտն էր հայտարարել, թե Լաչինի միջանցքում պետք է լինի ազատ եւ բաց տեղաշարժ: Վաշինգտոնը միաժամանակ դիմել է կողմերին՝ հորդորելով վերսկսել խաղաղ բանակցությունները եւ զերծ մնալ սահմանի երկայնքով սադրանքներից ու թշնամական գործողություններից:

Պաշտոնական Փարիզն իր հերթին հայտարարել է, որ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի Նոր ճանապարհին անցակետի տեղադրումը հակասում է հրադադարի համաձայնագրերով ստանձնած պարտավորություններին: Ֆրանսիան Բաքվին կոչ է արել հետեւել Արդարադատության միջազգային դատարանի՝ Լաչինի միջանցքով տեղաշարժի արգելափակմանը, որը որոշմանը, որը հրապարակվել է դեռեւս երկու ամիս առաջ:



արժն ապահովելու որոշմանը, որը հրապարակվել է դեռեւս երկու ամիս առաջ:

«Այն պարտադիր է կատարման համար», - ընդգծել է Ֆրանսիայի ԱԳՆ-ն:

Բաքուն միանգամայն անհիմն է որակել Փարիզի այս պնդումը:

«Ադրբեջանն իր ինքնիշխան տարածքում» հսկիչ անցագրային կետ տեղադրելու լեգիտիմ իրավունք ունի, եւ որեւէ հիմք չկա պնդելու, թե այդ քայլը հակասում է եռակողմ հայտարարությանը, որեւէ միջազգային փաստաթղթի դրույթներին կամ էլ դատարանի որոշմանը», - հայտարարել է ԱԳ նախարարությունը:

Ավելի վաղ Բաքուն նույն կերպ հակադարձել էր նաեւ Հայաստանի արտգործնախարարությանը, որը պնդել էր, թե անցակետի տեղադրմամբ Ադրբեջանը նպատակ ունի Լեռնային Ղարաբաղում էթնիկ գտնված իրականացնել եւ իրագործել այն ամբողջությամբ հայաթափելու իր հետեւողական քաղաքականությունը:

ՆԱԽՈՎ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԸՆԴՈՒՄՆԵԼ Է ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Ֆրանսիայի Սենատում մեծամասնություն կազմող «Հանրապետականներ» խմբակցության նախագահ, Սենատում Լեռնային Ղարաբաղի հարցով խմբի հիմնադիր եւ նախագահ, Արեւելքի քրիստոնյաների հարցով կապի խմբի նախագահ Բրունո Ռետայոյի գլխավորած պատմիրակությանը:

Վարչապետը ողջունել է Սենատի պատվիրակության այցը Հայաստան եւ բարձր գնահատել Ֆրանսիայի աջակցությունը մեր երկրին այս բարդ ժամանակաշրջանում: Կառավարության ղեկավարը առանձին շնորհակալություն է հայտնել Սենատին՝ Հայաստանին ու ԼՂ-ին վերաբերող կարեւոր բանաձեւեր ընդունելու համար: «Այս անգամ դուք այստեղ եք գտնվում Հայոց ցեղասպանության տարելիցի օրը՝ կարեւոր եւ խորհրդանշական օր մեզ համար: Ինչպես իմ այսօրվա ուղերձում եմ նշել, սա անցյալի, ներկայի եւ ապագայի մասին խորհելու ամենապատեհ պահն է», - ասել է վարչապետը:

Ջրուցակիցներն անդրադարձել են Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին, Ադրբեջանի կողմից 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարության կոպիտ խախտմամբ Լաչինի միջանցքում ապօրինի անցակետի տեղադրմանը, Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը վերաբերող հարցերի:

Տարածաշրջանում անվտանգության եւ կայունության ապահովման համատեքստում կարեւորվել է Հայաստանում Եվրոպական միության դիտորդական առաքելության արդյունավետ գործունեությունը:

ԱՆԸՆԴՈՒՄՆԵԼԻ Է ՀԱՄԱՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի Դաշնությունն անընդունելի է համարում Լաչինի միջանցքի ռեժիմի ցանկացած միակողմանի փոփոխություն, որը չի բխում Հայաստանի, ՌԴ եւ Ադրբեջանի առաջնորդների կողմից 2020 թ-ի նոյեմբերի 9-ին ստորագրած եռակողմ հայտարարության դրույթներից. այս մասին ասվում է ռուսաստանյան արտաքին քաղաքական գերատեսչության հայտարարությունում:

«Մենք մեր լուրջ մտահոգությունն ենք հայտնում Լեռնային Ղարաբաղի ռուսական խաղաղապահ միավորման պատասխանատվության գոտում՝ հայ-ադրբեջանական սահմանագծում տիրող իրավիճակի կապակցությամբ: Ծայրահեղ մտահոգությամբ ենք արձանագրում հրադադարի ռեժիմի խախտման դեպքերի եւ տարաբնույթ միջադեպերի աճ, որոնք պարբերաբար երկու կողմից բերում են զոհերի: Ոչ պակաս վտանգավոր ենք համարում Ադրբեջանի եւ Հայաստանի հանրային տարածքում մեղադրական եւ ագրեսիվ հռետորաբանության աճը:

Հուսով ենք, որ Բաքուն եւ Երեւանը քաղաքական կամք կդրսեւորեն եւ մոտ ապագայում կկարողանան հաղթահարել այդ բացասական միտումը: Ռուսական կողմը պատրաստ է բոլոր անհրաժեշտ օգնությունը ցուցաբերել Ադրբեջանին եւ Հայաստանին ինչպես քաղաքական մակարդակում, այնպես էլ «տեղում»՝ խաղաղապահների հրամանատարության մասնակցությամբ: Մենք նաեւ զգուշացնում ենք արտաքին արեւմտյան խաղաղոլներին եւ տեղական ռուսաֆոբ տարրերին, որոնք աշխատում են իրենց պատեհապաշտ օրակարգի վրա, զերծ մնալ իրավիճակը սրելու փորձերից, այդ թվում՝ Ռուսաստանի դեմ արշավի միջոցով», - ասված է հայտարարությունում:



ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵԺ ԿՈՒՎ՝ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Armlur.am-ին Փարսաբար գյուղից հասած սեղեկությունների համաձայն երեկ ու գիշերին, Թաիրով գյուղում գործող «Կալիֆորնիա» գիշերային ակումբում թեժ կոնցերտ է եղել: Ըստ մեզ հասած լուրերի՝ Փարսաբար խոստացված համայնքի ղեկավար Գավիթ Մինասյանը եւ Գոռ անունով եւս մեկ անձ, իրենց ընկերների հետ միասին զսնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, անհարկի վիճաբանել են նշված ակումբում զսնվող անձանց հետ, հնչեցրել սեռական բնույթի հայտյալներ, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հաճախորդների, նշված ակումբի աշխատակիցների նկատմամբ, բռնություն գործադրել հաճախորդների նկատմամբ եւ աղակալաբար խոսակցել հարվածել դասերին, կոտրել ակումբի աղակիցները, այնուհետև նույն վարագիծը դրսևորել ակումբից դուրս՝ ճանապարհի երթևեկելի հասվածում, խափանել են ավտոմեքենաների բնականոն երթևեկությունը:



կերների հետ եւ իր մոտ եղած հրազեն չհանդիսացող օդամղիչ ատրճանակով կրակել է եղբայրներ Գեորգյանների ոտքերի ուղղությամբ՝ պատճառելով ծանր մարմնական վնասվածք: Քրեական գործը հարուցվել է 2009թ. մարտի 21-ին: Նախաքննության մարմնի՝ 2009թ. մայիսի 25-ի որոշմամբ՝ Գ. Մինասյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Երեսան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝

2009թ. հուլիսի 9-ի դատավճռով՝ Գ.Մինասյանը մեղավոր է ճանաչվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, եւ դատապարտվել է ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով: Վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Գ. Մինասյանի պաշտպան Ն. Մկրտչյանը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009թ. հոկտեմբերի 12-ի որոշմամբ՝ առաջին ատյանի դատարանի դատավճռը թողնվել է օրինական ուժի մեջ: ԸՆՍՈՒ ՍԱՆՈՒԿՅԱՆ

Իրավապահները փնտրում են Փարսաբար խոշորացված համանքում պաշտոն զբաղեցնող Գ. Մինասյանին, Գ.-ին, ուստիկությունն այս պահին քայլեր է իրականացնում անձանց ինքնուրույնները պարզելու ուղղությամբ: Նկատելով, որ սա առաջին դեպքը չէ, որ Փարսաբար համայնքի ղեկավարը նման պատմության մեջ է հայտնվում. 21.03.09թ. «Ակադեմի» կարող է բարում Գավիթ Մինասյանը վիճաբանել էր Գավիթ Փիլոյանի հետ, որից հետո գրուցելու նպատակով պայմանավորվել են հանդիպել ճառագայթային փողոցի Ա շենքի բակում, որտեղ վերջինս վիճաբանել է Գ. Փիլոյանի եւ ըն-

ԱՐՑԱՆ

ԱՎԵԼԱՅԵԼ Է ԶԱՆԳԵՐԻ ԹԻՎԸ

Ապրիլի 17-24-ն ընկած ժամանակահատվածում ԱԻ ղեկավարած ծառայության 911 ահազանգման կենտրոններում, նախորդ օրվա համեմատ, ավելացել է զանգերի թիվը, փոխարենը՝ նվազել դեղիքի ու դասահարների քանակը: Արցախի ԱԻՊԾ-ից News.am-ին սեղեկացնում են, որ գրանցված 1253 զանգից 17-ը՝ սեխնամի, 16-ը կենցաղային բնույթի կանչեր են:



ընդ ցուցաբերել են անհրաժեշտ օգնություն եւ վերադարձել մշտական տեղակայման վայր: Հրշեջ փրկարարներն անցած շաբաթվա ընթացքում կատարել են 4 ելք: Հրդեհի 3 դեպք է գրանցվել Ստեփանակերտ քաղաքում, 1-ը՝ Ասկերանի շրջանում: Բոլոր դեպքերով կատարվել են կանխարգելիչ գործողություններ: Յոթ օրվա ընթացքում փրկարար ուժերի վարչության սակրավորական խմբերը կատարել են 8 ելք: Հետախուզական

աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է շուրջ 278 միավոր տարբեր տեսակի ու տրամաչափի ռազմամթերք: ՆԳՆ ծառայողներն ապրիլի 23-ին եւ 24-ին ապահովել են Հայոց ցեղասպանության 108-րդ տարեկիցին նվիրված ջահերի եւ հիշատակի երթի մասնակիցների անվտանգությունը, հարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող Ջանգակատուն-հուշահամալիրում»,- ասված է Արցախի ԱԻՊԾ-ի հաղորդագրության մեջ:

«Արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման օպերատիվ խմբերն արձագանքել են ստացված բոլոր կանչերին՝ կատարելով փակված 3 դռան եւ 4 վերելակի բացում: Փրկարարների օգնությամբ 3 քաղաքացի տեղափոխվել է բուժօգնություն: Արտակարգ մեկ դեպք է գրանցվել Ստեփանակերտ քաղաքում: Հինգ պատանի բացօթյա հանգստանալու նպատակով դուրս են եկել քաղաքից եւ մոլորվել անտառում: Իրականացված որոնողափրկարարական աշխատանքների արդյունքում փրկարարները վերջիններիս հայտնաբերել են տեղափոխել են Ստեփանակերտ: «Ճանապարհատրանսպորտային պատահար» բնութագրմամբ 1 կանչ է գրանցվել. Ստեփանակերտ-Քոռանի ավտոճանապարհին տեղի ունեցած պատահարից ոչ ոք չի տուժել: Փրկարարներ-

ԼՈՒՐԵՐ

ԽՈՇՈՐ ԱՎՏՈՎԹԱՐ

Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ապրիլի 23-ին՝ ժամը 20:00-ին, ահազանգ է ստացել, որ Երեւանի Էրեբունու ավտոշուկայի մոտակայքում տեղի է ունեցել ճՏՊ, առկա է գազի արտահոսք, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

ՀՀ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունից դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Ըստ աղբյուրի՝ պարզվել է, որ բախվել են թիվ 58 համարի երթուղին սպասարկող Zhong Tong մակնիշի ավտոբուսը (վարորդ՝ Ս. Հ.՝ ծնված 1974 թ.), VAZ-2107 (վարորդ՝ Գ. Զ.՝ ծնված 1995 թ.), Nissan Fuga, Kia Optima, Hyundai Sonata եւ Volkswagen Passat մակնիշների ավտոմեքենաները: VAZ-2107 մակնիշի ավտոմեքենայից տեղի է ունեցել գազի արտահոսք:

Նշվում է, որ մինչ փրկարարների կանչի վայր հասնելը VAZ-2107 մակնիշի ավտոմեքենայի ուղեւորներ Կ. Հ.-ն, Զ. Ա.-ն եւ Հ. Մ.-ն հոսպիտալացվել են «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Փրկարարները հոսանքազրկել են VAZ-2107 մակնիշի ավտոմեքենան եւ փակել գազի բալոնի փականը:

ՍՈՄՆՁԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՍՖԱԼՏԻՆ

Գերմանիայի մայրաքաղաքում երթևեկությունը արգելափակելու մասին ավելի վաղ հայտարարված ակցիայի ընթացքում Letzte Generation (Վերջին սերունդ) շարժման ակտիվիստները իրենց ստանձել են Բեռլինի մի քանի ճանապարհների ասֆալտին. երկուշաբթի հաղորդել է Berliner Morgenpost-ը:

«Ինչպես ավելի վաղ հայտարարվել էր, Letzte Generation էկոակտիվիստների խումբը երկուշաբթի արգելափակել է Բեռլինի երթևեկությունը»,- գրում է հրատարակությունը:

Ոստիկանության տվյալներով, որոնք վկայակոչում է Berliner Morgenpost-ը, վաղ առավոտից ակտիվիստները քաղաքի ավելի քան 30 կետերում սկսել են խոչընդոտել տրանսպորտային միջոցների տեղաշարժը՝ պաստառներով դուրս գալով ճանապարհներին եւ իրենց ստանձելով ասֆալտին: Ակտիվիստների ամենից մեծ կուտակումը նկատվել է Շառլոտենբուրգ եւ Վիլմերսդոֆ շրջաններում:

Ակցիաները շարունակվում են, եւ արդեն խցանումներ են առաջացրել մի շարք ճանապարհներում:

Ավելի վաղ Letzte Generation-ը հայտարարել էր ակցիաների մեկնարկի մասին, որի ժամանակ շարժման կողմնակիցները խոստացել էին կաթվածահար անել Գերմանիայի մայրաքաղաքի ճանապարհները՝ ի նշան բողոքի կլիմայի պաշտպանության ոլորտում կառավարության քաղաքականության դեմ:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 49 դեպք:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՐԱՍ Է ՕԳՆԵԼ

Ամերիկացի զինծառայողները կման Զիբուբինում Սուդանում ստեղծված իրադրության պատճառով ապահովելու ԱՄՆ պետական ծառայողների անվտանգությունը: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ուժերը պատրաստ են ուղարկվել տարածաշրջան: Այդ մասին ասված է ԱՄՆ նախագահ Զո Բայդենի նախնախորհի 23-ին Կոնգրեսի երկու պալատների ղեկավարներին հասցեագրված նամակում:

«Իմ հրամանով ԱՄՆ զինված ուժերն իրականացրել են Սուդանի խարթում քաղաքից ամերիկյան (դիվանագիտական) անձնակազմի եւ այլ անձանց տարահանման գործողություն՝ ի պատասխան Սուդանի անվտանգության ոլորտում իրադրության վատթարացման: Այդ գործողության իրականացման եւ օժանդակման համար ԱՄՆ զինծառայողները համապատասխան մարտական տեխնիկայով ուղարկվել են Զիբուբին, Եթովպիա եւ Սուդան: ԱՄՆ զինված ուժերը կման Զիբուբինում պաշտպանելու Միացյալ Նահանգների (դիվանագիտական) անձնակազմին եւ այլ անձանց այնքան ժամանակ, մինչեւ անվտանգային իրավիճակն այլեւս չպահանջի նրանց ներկայությունը, իսկ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ուժերը պատրաստ են տեղակայվել տարածաշրջանում», - ընդգծել է Սպիտակ տան ղեկավարը:

Ամերիկյան օրենսդրության համաձայն՝ նախագահը պետք է Կոնգրեսին իրազեկի նման դեպքերում զինված ուժերի օգտագործման մասին: Ինչպես պարզաբանել է Բայդենը, տարահանման որոշումը կայացվել է՝ հաշվի առնելով «երկրի ներսում եւ արտերկրում Միացյալ Նահանգների քաղաքացիների անվտանգության ապահովման համար իր պատասխանատվությունը», ինչպես նաեւ ելնելով Միացյալ Նահանգների ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության շահերից եւ հաշվի առնելով զլխավոր հրամանատարի եւ գործադիր իշխանության ղեկավարի սահմանադրական լիազորությունները:

Իր հերթին, ապրիլի 23-ին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ղեկավար Սամանթա Փաուերը հայտարարել էր, որ Քենիա է ուղարկվել փորձագետների խումբ՝ համակարգելու մարդասիրական օգնության առաքումը Սուդանում տիրող իրադրության կապակցությամբ: Նա հավելել է, որ իր գերատեսչությունն աշխատում է ԱՄՆ-ի գործընկերների հետ՝ որոշելու համար առաջնահերթ կարիքները եւ լուծելու մարդասիրական բեռի առաքման հարցերը:

ՌԵԿՈՐԴ

ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ՝ 2,224 ՏՐԻԼԻՈՆ ԴՈՒԱՐ

2022 թվականին համաշխարհային դաժնամահների ծախսերը հասել են վերջին ութ տարվա ընթացքում ռեկորդային գումարի. ասվում է Մոնիտորինգի խաղաղության խնդիրների հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) հետազոտության սվյալներում:

Ինչպես ցույց է տալիս SIPRI-ի վիճակագրությունը, համաշխարհային ռազմական ծախսերը 2022 թվականին աճել են 3,7 տոկոսով եւ հասել ռեկորդային բարձր ցուցանիշի՝ 2,224 տրիլիոն դոլարի: Ընդ որում՝ նշվում է, որ համաշխարհային պաշտպանական ծախսերը, 2013-2022 թվականների ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 19 տոկոսով եւ ամեն տարի աճում են 2015 թվականից:

Ռազմական ծախսերի գծով համաշխարհային առաջատարներն են ԱՄՆ-ն, Չինաստանը, Ռուսաստանը, Հնդկաստանը եւ Սաուդյան Արաբիան: Այդ երկրներին բաժին է ընկել ռազմարդյունաբերական համալիրի ոլորտում համաշխարհային ծախսերի շուրջ 63 տոկոսը: Հետազոտության համաձայն՝ պաշտպանական ծախսերի զգալի աճը կապված է առաջին հերթին Ուկրաինայի հակամարտության հետ: Միեւնույն ժամանակ, Եվրոպայի օգնությունը Կիեվին, ինչպես նաեւ Ռուսաստանի աճող ծախսերը ստիպել են մի շարք պետությունների վերանայել նաեւ իրենց ռազմական բյուջեները: ԱՄՆ-ի համապատասխան ծախսերն ավելացել են 0,7 տոկոսով՝ հասնելով 877 միլիարդ դոլարի: Միեւնույն ժամանակ, Կիեվին Վաշինգտոնի ռազմական օգնության ընդհանուր ծավալը կազմել է 19,9 միլիարդ դոլար: Իսկ Չինաստանը 28 տարի շարունակ շարունակում է աստիճանաբար ավելացնել իր պաշտպանական բյուջեն, ինչը նույնպես ռեկորդային ցուցանիշ է: Նրա բյուջեն, ըստ զեկույցի, կազմում է 292 միլիարդ դոլար:



Ռուսաստանի ռազմական ծախսերը, ինչպես հաշվարկվել են փորձագետները, աճել են 9,2 տոկոսով՝ հասնելով 86,4 միլիարդ դոլարի (միեւնույն ժամանակ, զեկույցում կա վերապահում, որ Ռուսաստանի վերաբերյալ տվյալները կարող են ճշգրիտ չլինել՝ Ռուսաստանի իշխանությունների կողմից պաշտոնական տեղեկատվության փոքր քանակի պատճառով): Միեւնույն ժամանակ, Ուկրաինայի ռազմական ծախսերն աճել են 640 տոկոսով, ինչը 1949 թվականից ի վեր երկրում աճի ամենաբարձր ցուցանիշն է: Ուկրաինայի պաշտպանական բյուջեն նոր ուսումնասիրության մեջ կազմել է 44 միլիարդ դոլար: Հետազոտության մեջ չի

նշվում այլ երկրների կողմից Կիեվին ցուցաբերվող օգնությունը: 2022 թվականին Եվրոպայի երկրների ռազմական ծախսերն աճել են 13 տոկոսով՝ հասնելով 480 միլիարդ դոլարի նշագծին՝ այդպիսով գրանցելով վերջին 30 տարվա ընթացքում ամենաբարձր աճը: Տարածաշրջանում ռեկորդային ցուցանիշների հասնելու վրա զգալի ազդեցություն է ունեցել Եվրոպական մի շարք երկրների, հատկապես՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի ծախսերի ավելացումը: Ջեկույցի տվյալների համաձայն՝ ԵՄ երկրներից ամենաշատը ռազմական կարիքների համար ծախսերն ավելացրել են Ֆինլանդիան (36 տոկոս), Լիտվան (27), Շվեդիան (12) եւ Լեհաստանը (11):

ՅԻՇԱՍԱԿ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 108-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

Երեկ՝ ապրիլի 24-ին, աշխարհասփյուռ հայ ժողովուրդը ոգեկոչում էր 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում սեղի ունեցած Հայոց ցեղասպանության ճանաչման հիշատակը. այս մասին հայտարարություն է արձակել Հայաստանի ԱԳՆ-ն՝ Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցի կառավարությամբ:

Հայտարարությունում նաեւ ասվում է. «Ծրագրված է իր ծավալներով նախադեպը չունեցող՝ մարդկության դեմ ուղղված այս հանցագործության հետեւանքով 1915-1923թթ. ընթացքում սպանվեց 1,5 մլն հայ, հարյուր հազարավորները ենթարկվեցին բռնության ու բռնի տեղահանության՝ զրկվելով հայրենիքում սեփական ինքնության պահպանման հնարավորությունից: Այս ոճրագործությունը, որն իրականացվեց մի ողջ ժողովրդի դեմ նրա ազգային պատկանելիության՝ հայ լինելու պատճառով, հետագայում հիմք դարձավ ցեղասպանության հանցանքի սահմանման համար եւ արտացոլվեց «Ցեղասպանության կանխարգելման եւ

դրա պատժի մասին» միջազգային կոնվենցիայում:

Ավելի քան մեկ դար անց կարելի է արձանագրել, որ ցեղասպանության ոճրագործության դատապարտման եւ ճանաչման գործում միջազգային հանրության ցուցաբերած համերաշխության դրսեւորումն է շուրջ երեք տասնյակ երկրի կողմից պետական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչումը, ինչպես նաեւ մի շարք միջազգային կառույցների կողմից համապատասխան բանաձեւերի ու հռչակագրերի ընդունումը, ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի շրջանակներում ՀՀ կողմից հեղինակվող «Ցեղասպանության կանխարգելում» բանաձեւերի միաձայն ընդունումը:

Ցեղասպանության միջազգային ճանաչումը միտված է աշխարհի որեւէ այլ անկյունում մարդկության դեմ նմանատիպ հանցագործության կրկնությունը կանխելուն, այդ թվում՝ նոր էթնիկ զտումներ իրականացնելու սպառնալիքների զսպմանը. անտարբերությունը, թողտվությունը եւ անպատժելիությունն են, որ հնարավոր են դարձնում այդ զանգվածային ոճրագործության իրականացումը:

Ցավոք այսօր էլ, ինչպես եւ մեկ դար առաջ, աշխարհի տարբեր անկյուններում շոշափելի է ցեղասպանության վտանգը: Այսօր էլ ցեղասպանության, էթնիկ զտումների վտանգի առջեւ են կանգնած Լեռնային Ղարաբաղում ապրող հայերը: Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ Ադրբեյջանի շարունակական ագրեսիվ քաղաքականությունը, հայատյաց հռետորաբանությունը, սեփական հայրենիքից զրկելուն, հայկական հետքը վերացնելուն ուղղված գործողությունները ոչ այլ ինչ են, քան ցեղասպան մտադրությունների դրսեւորում:

Այսօր վերստին գլուխ խոնարհելով Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի առջեւ եւ որպես ցեղասպանությունների կանխարգելման օրակարգի առաջ մղման առաջամարտիկ՝ վերահաստատում ենք մեր հանձնառությունն արդարության, ճշմարտության ճանաչման, նոր ցեղասպանությունների ու մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման գործին, էթնիկ, կրոնական եւ ռասայական հողի վրա խտրականության եւ անհանդուրժողականության դրսեւորումների դեմ պայքարին»:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ՃՏՊ. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԲԱՅՈՒՄ

ԳԱՆՁԱԿԻ ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ԸՆԵՔ

Ապրիլի 21-ին Գեղարքունիք-Իգեր ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Գեղարքունիքի մարզ էին ժամանել Իգերի դեպարտամենտի նախագահ Ժան Պիեռ Բարբիեն և նրա գլխավորած պատվիրակությունը:

Հյուրերը Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի ուղեկցությամբ ներկա գտնվեցին Գանձակի բուժամբուլատորիայի վերանորոգված շենքի բացման արարողությանը, ինչպես նաև այցելեցին Կարմիրգյուղի բուժամբուլատորիա:

Հիշեցնենք, որ դեպարտամենտի առողջապահական առանցքային ծրագրերի շրջանակներում «Բժշկական օգնություն և զարգացում» ծրագրով, որի պատասխանատուն է Ժան-Կլոդ Ռոսսեն, 2020-2021 թթ.-ի ընթացքում իրականացվել էին Կարմիրգյուղի և Գանձակի բժշկական ամբուլատորիաների մասնակի վերանորոգման աշխատանքներ:

2021-2022թթ.-ի ընթացքում հիմնովին վերանորոգվել է Գանձակ գյուղի բուժամբուլատորիայի շենքը, կատարվել է ներսի կոսմետիկ վերանորոգում, փոխվել են պատուհանները, և տեղադրվել է ջեռուցման համակարգ:

Նույն ծրագրի շրջանակներում 2022-2023թթ.-ի ընթացքում ամբողջությամբ վերանորոգվել է նաև Կարմիրգյուղի բուժամբուլատորիայի սանհանգույցը, իրականացվել են ներքին հարդարման աշխատանքներ, փոխվել են պատուհանները, և տեղադրվել է ջեռուցման համակարգ:

Իգերի դեպարտամենտի ներկայացուցիչներն այցելեցին նաև Գավառի Լեւոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոն, որտեղ մշակութային առանցքի ծրագրերի շրջանակներում ցուցադրվեցին ֆրանսերեն լեզվի ուսուցման դասընթացների մասնակից ֆրանկոֆոն երեխաների նկարները:

Հյուրերի այցը եզրափակվեց Գեղարքունիքի երկրագիտական թանգարանում: Իգերի դեպարտամենտի կողմից իրականացվող ֆրանսախոսություն առանցքի ծրագրերի շրջանակներում 2023թ.-ից մեկնարկել են թանգարանի ցուցանմուշների թարգմանության աշխատանքները: Այս պահի դրությամբ թանգարանի չորս սրահների շուրջ 300 ցուցանմուշների թարգմանություններն արդեն ներկայացվել են հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով:

Գեղարքունիք-Իգեր ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում կողմերի միջև հանդիպումները կշարունակվեն առաջիկա օրերի ընթացքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՕՐՈՔ ԱԶԳԱՐԱՐՈՒՄ Է ՑԵՂԱՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ակնհայտ է, որ անցակետի տեղադրումը Ադրբեջանը փորձում է նոր թափ հաղորդել կասարյալ անդամաժեղության և ամենաթողության մթնոլորտում իր կողմից վարվող էթնիկ զսման ֆաղափակաճությանը. այս մասին նշված է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության տարածած հայտարարության մեջ:

«Իր գործակալների միջոցով Արցախն ավելի քան 4 ամիս անմարդկային շրջափակման մեջ պահելուց հետո Ադրբեջանն ապրիլի 23-ին ապօրինաբար հսկիչ անցակետ է տեղադրել Լաչինի միջանցքում՝ Յակարի գետի կամրջի վրա: Հերթական անգամ ընդգծում ենք, որ Լաչինի միջանցքի նկատմամբ վերահսկողության հաստատման ուղղված Ադրբեջանի քայլերը ուղղակիորեն հակասում են 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 6-րդ կետին: Եռակողմ հայտարարության տակ Ադրբեջանի նախագահի ստորագրությունն Ադրբեջան պետության ուղղակի և միանշանակ համաձայնությունն է՝ Լաչինի միջանցքի նկատմամբ բացառիկ վերահսկողությունը փոխանցել ՌԴ խաղաղապահ զորակազմին:

Հրադարարի հաստատումից ի վեր Ադրբեջանը պարբերաբար խախտել է 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության գրեթե բոլոր դրույթները, սակայն անցակետ տեղադրելու մասին ադրբեջանական կողմի պաշտոնական հայտարարությունը վկայում է Բաքվի՝ տվյալ փաստաթղթով ստանձնած պարտավորություններից հրաժարվելու մտադրության մասին:

Այս համատեքստում ակնկալում ենք ինչպես լայն միջազգային հանրության, այնպես էլ եռակողմ հայտարարության կողմերի և, առաջին հերթին, հայտարարության իրականացման երաշխավոր հանդիսացող Ռուսաստանի Դաշնության միանշանակ և համարժեք արձագանքն ու գործուն քայլերը՝ ադրբեջանական անցակետի տեղադրումը թույլ չտալու, Լաչինի միջանցքը բացելու, Ադրբեջանի կողմից եռակողմ հայտարարությանը ստանձնած պարտավորությունների իրականացումն ու Արցախի ժողովրդի ֆիզիկական անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:



Ակնհայտ է, որ անցակետի տեղադրումը Ադրբեջանը փորձում է նոր թափ հաղորդել կասարյալ անդամաժեղության և ամենաթողության մթնոլորտում իր կողմից վարվող էթնիկ զսման քաղաքականությանը: Ադրբեջանի ղեկավարությունը ոչ միայն չի թաքցնում իր ցեղասպան գործողությունները, այլև նախօրոք ազդարարում է դրանց մասին՝ չարժանանալով միջազգային հանրության դատապարտմանը կամ հակազդեցությանը:

Հատկանշական է, որ Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի իրավունքների զանգվածային խախտումներն իրականացվում են Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատման ուղղությամբ միջազգային միջնորդների ջանքերի և հայտարարությունների պայմաններում: Ադրբեջանը, ըստ էության, Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացն օգտագործում է որպես գործիք՝ բացառելու ներգրավված պետությունների կողմից իր հանցավոր քաղաքականության կանխարգելման ուղղված հնարավոր միջոցների իրականացումը:

Եռակողմ հայտարարության կողմ չհանդիսացող, սակայն միջազգային խաղաղության և անվտանգության, այդ թվում էթնիկ գտնումների և ցեղասպանության կանխարգելման համար պատասխանատվություն կրող պետությունների կողմից համարժեք արձագանքի բացակայությունը և Ադրբեջանի անօրինական պահանջները քննարկելու առաջարկները հավասարազոր են Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության թողովությունը: Ավելին՝ Ադրբեջանի ապօրինի պահանջները քննարկման դնելու ցանկացած առաջարկ փորձ է օրինականացնել դրանք և, ըստ էության, ծառայում է Բաքվի հանցավոր ծրագրերի խրախուսմանը:

Ստեղծված իրավիճակում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության կանխարգելման ուղղությամբ վճռական քայլերի իրականացումը հրամայական է: Պահանջում ենք ՄԱԿ-ի Ան անդամ պետություններից իրականացնել ՄԱԿ-ի կանոնադրությամբ և միջազգային իրավունքով ստանձնած իրենց պարտավորությունները և վերջ դնել Արցախի էթնիկ զսման և նրա ժողովրդին ոչնչացնելու Ադրբեջանի հանցավոր քաղաքականությանը»,- ասված է հայտարարության մեջ:

Team Telecom Armenia

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՂՊԱՆՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2023թ. ապրիլի 22-ին ամբողջ աշխարհում նշվում է Երկրի օրը: Հավասարի լինելով ի՞ր՝ Երջակա միջավայրի դաժնաման ֆաղափակաճությանը՝ Team Telecom Armenia-ն ամփոփել է այդ ուղղությամբ իրականացրած ծրագրերը:

Երկրի օրը միավորում է միլիոնավոր մարդկանց ամբողջ աշխարհում բնության պահպանության և Երկիր մոլորակի մաքրության ապահովման լուծումներ գտնելու և միջոցառումներ ձեռնարկելու շուրջ: Այս տարի այն նշվում է Invest in our Planet խորագրի ներքո:

Որպես շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք որդեգրած ընկերություն՝ Team-ն արդեն մի քանի տարի է, ինչ անցում է կատարել

էներգաարդյունավետ լուծումների՝ կապի և հաղորդակցության էներգապահովման համար օգտագործելով արեալին էներգիա, նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները:

Ընկերության ավտոպարկը շարունակում է համարվել էլեկտրոմոբիլներով. 2022թ.-ին ձեռք բերած մեքենաների 98%-ը էլեկտրոմոբիլներ են, որոնք աշխատում են անձայն շարժիչներով և զրոյական արտանետումներով:

Ներկայացնելով ընկերության բնության պահպանության ուղղությամբ տարվող աշխատանքները՝ Team Telecom Armenia ընկերության տնօրեն Հայկ Եսայանը նշեց, որ յուրաքանչյուր ընկերություն պարտավոր է վարել ռեսուրսախնայող գործունեություն, նվազագույնի հասցնել իր գործունեության հետեւան-

քով առաջացող շրջակա միջավայրի հնարավոր աղտոտվածությունը՝ շեշտելով, որ իրենց ռազմավարական ծրագրերը մշակելիս այս ուղղությանը շատ մեծ կարեւորություն և առաջնահերթություն են տվել:

Team-ում ներդրվել է ռեսուրսների շրջանաձեւ օգտագործման հայեցակարգ (circularity), և թվային աղբի ստեղծումից խուսափելու համար ընկերությունը վերանորոգում է կրկնօգտագործում է կապի ապահովման սարքերը՝ դրանք աղբավայր ուղարկելու փոխարեն: Նշենք, որ կրկնօգտագործումների և վերամշակումների շնորհիվ՝ ընկերության թափոնների և օգտագործվող թղթի քանակը նույնպես էականորեն կրճատվել է, իսկ վաճառակետերում ներդրվել են E-sim և E-pon տեխնոլոգիաները:

«ժողովուրդ» օրաթերթում և Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ՆՇՎԵԼ Է ՌԱԽՄԱՆԻՆՈՎԻ 150-ԱՄՅԱԿԸ

Երեւանում, «Դոմ Մոսկվի» մոսկովյան մշակութաօրոճարարական կենտրոնի (ՄՄԳԿ) նախաձեռնությամբ եւ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, Կամերային երաժշտության ազգային կենտրոնում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված ռուս ակադեմիկոս կոմպոզիտոր Մերգել Ռախմանինովի 150-ամյակին:



Կենտրոնի դահլիճի նախասրահում հյուրերը ծանոթացան «Ռախմանինովյան վայրեր» ինտերակտիվ ցուցադրությանը, որտեղ ներկայացվեցին դաշնակահար, դիրիժոր, հասարակական գործիչ Մերգել Ռախմանինովի կենսագրությունից բացառիկ փաստեր եւ լուսանկարներ, որոնցից շատերը ցուցադրվում էին առաջին անգամ: Նյութերը տրամադրել էր ռուսական մշակութային ժառանգության պահպանման «Իվանովկա» արգելոց-թանգարանը:

«Ռուս հանճար Ռախմանինովի անունը հայտնի է ամբողջ աշխարհում: Ականավոր կոմպոզիտորի, դաշնակահարի եւ դիրիժորի բազմակողմանի գործունեությունը կարելի էր հանգրվան է ոչ միայն ռուսական, այլեւ համաշխարհային երաժշտական մշակույթի պատմության մեջ: Երաժշտի հոբելյանն այսօր նշում են աշխարհի շատ երկրներում, եւ մենք ուրախ ենք, որ ականավոր վարպետի հիշատակը պահպանվում է նաեւ Հայաստանում: Մեծ ոգեւորությամբ ընդունվեց արվեստի գործչին նվիրված ստեղծագործական երեկո կազմակերպելու նախաձեռնությունը: Հանդիսատեսը ոչ միայն կլսի Ռախմանինովի փառահեղ ստեղծագործությունները, այլեւ հետաքրքիր փաստեր կբացահայտի նրա կյանքից, որտեղ, կարելի է տեսնել նաեւ հայկական հետքը»,- նշել է Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանը:

Կոմպոզիտոր Անտո Բարաջանյանը հաճախ էր խոսում Ռախմանինովի վարպետության մասին: Ինքը՝ Ռախմանինովը, երաժշտություն է գրել նաեւ հայ բանաստեղծների, այդ թվում՝ Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների հիման վրա: Համերգային ծրագիրը Հայաստանի

եւ Ռուսաստանի միջեւ բարեկամության յուրօրինակ խորհրդանիշ էր:

Ջութակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Կարեն Շահգալոյանը շնորհակալություն հայտնեց Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնին արդյունավետ գործակցության համար՝ ընդգծելով, որ կենտրոնն այն եզակի հաստատություններից է, որը մեծ ուշադրություն է դարձնում հասարակության շրջանում արվեստի մասսայականացմանը՝ մշտապես խրախուսելով ստեղծագործական նախաձեռնությունները եւ նպաստելով մշակութային գործիչների միջեւ երկխոսության հաստատմանը:

Համերգի ծրագիրը բացվեց «Ֆանտազիա» ստեղծագործությամբ երկու դաշնամուրի համար՝ Արմինե Գրիգորյանի եւ

Սոնա Բարսեղյանի կատարմամբ: «Գեղեցկուհի, մի՛ երգիր ինձ մոտ» ռոմանսը եւ «Ալեկո» օպերայից «Հին ամուսին» արիան հնչեցին Կատարինա Ֆարգադյանի կատարմամբ: Համերգի ավարտին հնչեց N2 էլեգիական տրիոն, որը կատարեցին ջութակահար Կարեն Շահգալոյանը, Ռուսաստանից թավջութակահար Դմիտրի Պրոկոֆեւը եւ դաշնակահարուհի Արմինե Գրիգորյանը:

Առաջիկայում Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի նախաձեռնությամբ միջոցառումներ կլինեն՝ նվիրված հայ եւ ռուս մի շարք անվանի գործիչների հոբելյաններին: Մայիսի 5-ին Գյումրիում տեղի կունենա համերգ՝ նվիրված աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 120-ամյակին:

ԻՆՉՈՒՒ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՓՈՔՐԻԿ ՔԱԼԱԿՏԻԿԱ

James Webb տիեզերական աստղադիտակի դիտարկումներն օգտագործելու շնորհիվ՝ Միլենտոտայի համալսարանի գիտնականների թիմը հայտնաբերել է եզակի փոքրիկ գալակտիկա, որը նոր աստղեր էր «արտադրում» իր չափի համար չափազանց բարձր արագությամբ:

Մեծ պայթյունից ընդամենը 500 միլիոն տարի անց այս գալակտիկան այսպիսի հեռավորության վրա երբեւէ հայտնաբերված ամենափոքր գալակտիկաներից մեկն է, եւ դրա ուսումնասիրությունը կարող է օգնել աստղագետներին ավելի իմանալ գալակտիկաների մասին, որոնք գոյություն են ունեցել տիեզերքի ձեւավորումից անմիջապես հետո: Աշխատությունը հրապարակվել է Science ամսագրում, որն աշխարհի առաջատար գիտական ամսագրերից մեկն է համարվում:

«Այս գալակտիկան հեռու է բոլոր աստղադիտակների հասանելիության գոտուց՝ բացառությամբ James Webb-ի, եւ այս հեռավոր գալակտիկայի՝ իրենց տեսակի մեջ առաջին դիտարկումները տպավորիչ են», - ասել է ուսումնասիրության ավագ հեղինակ, Միլենտոտայի համալսարանի Ֆիզիկայի եւ աստղագիտության դպրոցի դոցենտ Պատրիկ Քելլին:

«Մենք կարող ենք ուսումնասիրել անցյալը՝ գրեթե մինչեւ Մեծ պայթյունի շրջանը, եւ մենք երբեք այդքան մանրամասն չենք ուսումնասիրել գալակտիկաները, որոնք գոյություն են ունեցել տիեզերքի ձեւավորման սկզբում: Այս գալակտիկան գրեթե միլիոն անգամ ավելի քիչ ծավալ է բաղեցնում, քան Շիր Կաթինը, բայց մենք տեսնում ենք, որ այն դեռեւս ամեն տարի նույն թվով աստղեր է ձեւավորում», - հավելել է նա:

Այս փոքրիկ եւ նոր գալակտիկան գիտնականները կարողացել են գտնել եւ ուսումնասիրել տիեզերական հետաքրքիր երեւույթի շնորհիվ, որը կոչվում է գրավիտացիոն լինգավորում: Այն առաջանում է, երբ զգալի զանգված ունեցող օբյեկտը թեքում է իր կողքով անցնող լույսը, ինչի արդյունքում ֆոնային օբյեկտի պատկերը կարող է մեծանալ: Գրավիտացիոն լինգավորման շնորհիվ ֆոնային փոքր գալակտիկան 20 անգամ ավելի պայծառ է երեւացել, քան դրա իրական պայծառությունն է:

«Տիեզերքի ձեւավորման ժամանակ գոյություն ունեցող գալակտիկաները շատ տարբեր են այն գալակտիկաներից, որոնք մենք այժմ տեսնում ենք մոտակա տիեզերքում,- բացատրել է հոդվածի առաջին հեղինակ եւ Միլենտոտայի աստղաֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտ Ջեյլի Ուիլյամսը: Այս հայտնագործությունը կօգնի մեզ ավելի իմանալ առաջին գալակտիկաների բնութագրերի մասին, թե ինչպես են դրանք տարբերվում մոտակա գալակտիկաներից, եւ ինչպես են առաջացել վաղ գալակտիկաները»:

ՄԵՐԺ ԹԱՆԿՅԱՆԸ ՀԻՇԵՑՈՒԵԼ Է

«ԱԶԳԱՅԻՆ ՑԱՎԸ ՄՆՈՒՄ Է ՄԵՐ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

Ամերիկահայ երաժիշտ, SOAD-ի հայցնի անդամ Մերժ Թանկյանն ինսագրամայան իր էջում հիշեցրել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա մասին: Նա կիսվել է գրառմամբ, որտեղ ասվում է. «Փիսակցումն ու ազգային ցավը մնում է մեր հավաքական հիշողության մեջ: Այն բարոնակ մեզ հիշեցնում է ամուր կադրված միասնականության մասին, որը մենք ողբում է կիրառելով, որդեսգի հասնելով ազգային բարգավաճման»:



«...գրել է Թանկյանը: Ադրբեջանը շարունակում է կիրառել հայերի հանդեպ իր օրինական շրջափակումը՝ տեղադրելով անցակետ»:

Թանկյանն անդրադարձել է նաեւ Ադրբեջանի կողմից Հայաստանի ու Արցախի հանդեպ շարունակական ագրեսիային: Նա կիսվել է ապրիլի 23-ին Սոթքի հատվածում տեղակայված հայկական դիրքում հակառակորդի կրակոցի հետեւանքով հայ զինծառայողի մահվան եւ Արցախում Հակարի գետի կամրջի մոտ ադրբեջանական կողմի անցակետ տեղադրելու լուրերով: «Ադրբեջանը տերորիստ պետություն

● Ապրիլի 26-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Հովհաննես Դավթյան. «Ասի՛ ասեմ, չասեք՝ չասեց»» սթենդափր: Տոմսերի արժեքը՝ 4000-8000 դրամ:



Էջը՝ ՌՈՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ**

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ դեղֆերում գործատու իրավունք ունի իր նախաձեռնությամբ լուծել աշխատողի հետ կնքված աշխատանքային դաշմանագիրը:**

Գրիշա Ահարոնյան (37 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային դաշմանագիրը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման ու, օրենքով նախատեսված դեպքերում, պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում,

2) արտադրության ծավալների եւ (կամ) տնտեսական եւ (կամ) տեխնոլոգիական ու (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման եւ (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի եւ (կամ) հաստիքների կրճատման դեպքում,

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում,

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում,

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում,

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում,

7) աշխատողի երկարատե անաշխատունակության հետեւանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը եւ պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով):

**ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն**

**«ԺՈՂՎՈՐԳ».** Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

**ԿԱՐԳ**

**ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում ինձնական կառույցը:**

Իրինա Մալխասյան (39 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ի. Մալխասյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ ինքնակամ կառույց է համարվում օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված):

**Կադաստրի կոմիտե**

**«ԺՈՂՎՈՐԳ».** Ինքնակամ կառույցը կարող է քանդվել հողամասի սեփականատիրոջ կողմից: Ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները եւ օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

**ԼՈՒՐ ԿԱՐԴ**

Լուսանկարը՝ համացանցից



Օլիմպիական խաղերի եռակի մեդալակիր, Եվրոպայի եւ աշխարհի բազմակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը կրկին լավագույնն է Եվրոպայում: Խորվաթիայի մայրաքաղաք Ջագրեբում ընթացող հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնության 97 կգ քաշային կարգի եզրափակչում Արթուր Ալեքսանյանը մրցեց բուլղար Կիրիլ Միլովի հետ: Հայ ըմբիշը հաղթեց 5:1 հաշվով:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ  
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ  
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
Ազգանուն՝ \_\_\_\_\_  
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

**ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



Շիրակ	+ 2 + 5 +11 + 16	Արարատ	+10 + 13 +19 + 21
Կոտայքի լեռներ	+ 4 + 6 +10 + 13	Արմավիր	+10 + 13 +18 + 20
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +14 + 16	Վայոց ձորի լեռներ	+ 4 + 6 + 8 + 10
Գեղարքունիք	+ 3 + 7 +10 + 13	Վայոց ձորի նախալեռներ	+10 + 13 +23 + 26
Լոռի	+ 6 + 9 +14 + 18	Սյունիքի հովիտներ	+10 + 13 +16 + 19
Տավուշ	+ 8 + 12 +15 + 18	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 10 +19 + 24
Արագածոտնի լեռներ	+ 4 + 6 + 9 + 12	Արցախ	+ 6 + 10 +20 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 +14 + 18	Երեւան	+7 9 +19 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22<sup>ա</sup>/3, հեռ.՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 24.04.2023

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: